# ՌԵԿՏՈՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եվրասիա միջազգային համալսարան
2020-2021 ուսումնական տարի

Երևան, 2022

«Հաստատում եմ»

ԵՄՀ Կառավարման խորհրդի նախագահ,

կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Սամվել Պիպոյան _____

«22» 07 2022

# ԵՄՀ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ

## ՆՊԱՏԱԿ 1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

| Գնահատման առանցքային ցուցանիշներ (KPI) | Թիրախային ցուցանիշ | Իրական ցուցանիշ |
|---|---|---|
| 1.1. Եկամտաբերության մակարդակի աճ | նվազագույնը 15% | Նախորդ ուստարվա համեմատ՝ 15% (+31 408 500 դրամ) |

## ՆՊԱՏԱԿ 2. ԲՅՈՒՋԵԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

| Գնահատման առանցքային ցուցանիշներ (KPI) | Թիրախային ցուցանիշ | Իրական ցուցանիշ |
|---|---|---|
| 2.1. Բյուջեի նախահաշվի կազմում և կատարում՝ նվազագույն բացասական շեղումով | առավելագույնը 20% շեղում | Մանրամասն տե՛ս բյուջեի 2021 թվականի նախահաշվի կատարողականի հաշվետվությունում |

## ՆՊԱՏԱԿ 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐՀՈՍՔԻ ՆՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ՝ ՆՈՐ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՄԲ

| Գնահատման առանցքային ցուցանիշներ (KPI) | Թիրախային ցուցանիշ | Իրական ցուցանիշ |
|---|---|---|
| 3.1. Միջազգային ուսանողների ներգրավումից ստացված եկամուտ | նվազագույնը 20% | 51% (103 458 000 դրամ) |

**Հաշվետվություն (Կետեր 1.1, 2.1, 3.1)**

2013 թվականից բուհում իրականացվում է ֆինանսների պլանավորում իսկ նախահաշիվը քննարկվում և հաստատվում է Կառավարման խորհրդի կողմից: ԵՄՀ-ում ֆինանսական պլանավորման հիմքում ընկած է Ռազմավարական ծրագիրը, ստորաբաժանումների տարեկան պլանները, մասնագիտության կրթական ծրագրերի փաթեթները և կրթական ծրագրերի պատասխանատուների կողմից ներկայացված պահանջագրերը: ԵՄՀ երկրորդ ինքնավերլուծության և արտաքին հավատարմագրման ժամանակ բյուջեի կապակցումը Ռազմավարական խնդիրներին թերի էր, ինչի ուղղությամբ ներկայացվել էր արտաքին փորձագետների կողմից խորհրդատվություն: Բյուջեի և Ռազմավարական ծրագրի կապակցումն ապահովելու նպատակով վերանայվել է Եկամուտների և ծախսերի նախահաշվի, ինչպես նաև կատարողականի ձևաչափը և արդեն երկրորդ տարին է ինչ ֆինանսական պլանավորումն իրականացվում է սահմանված ձևաչափով:

Երկրորդ հավատարմագրումից հետո բուհը պետական բյուջեից ստանում է որոշակի ֆինանսավորում, սակայն 2021 թվականին բյուջեի մուտքերի շուրջ 80 տոկոսն ապահովվում է կրթական երեք աստիճանների վարձավճարներից (բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա): Ֆինան-

սական մուտքերի կայունության և դիվերսիֆիկացիայի միջոցով ֆինանսական անկախության ռազմավարական խնդրի իրականացումը բուհն ապահովում է նաև դրամաշնորհային ծրագրերի կայուն մուտքերի ապահովման միջոցով: Հարկ է նշել, որ բուհի միջազգայնացմանն ուղղված ջանքերն ապարդյուն չեն եղել և 2021 թվականին միջազգային ուսանողների ներգրավումից ստացված եկամուտը կազմել է շուրջ 51%՝ նպաստելով բուհի ֆինանսական կայունությանը: Կարևոր ենք համարում նաև եկամտաբերության մակարդակի աճը, որը նախորդ տարվա համեմատ 2021 թվականին ավելացել է 15%-ով:

2021 թվականին դրամական ելքերի շուրջ 50%-ը կազմել են աշխատանքային վարձատրությունները և համարժեք ծախսեր: 2017 թվականի համեմատ երկու անգամով ավելացել է հետազոտական գործունեության աջակցման նպատակով հատկացվող բյուջեն և հիմք ընդունելով ռազմավարական նպատակները՝ հետազոտությանն ուղղված ֆինանսական միջոցների տոկոսը տարեցտարի ավելանում է: ԵՄՀ-ն իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար: Բուհի նյութատեխնիկական բազան և ռեսուրսները պարբերաբար թարմացվում են նաև դրամաշնորհային ծրագրերի միջոցով, որոնց ԵՄՀ-ն դիմում է նպատակային: Դրամաշնորհային ծրագրերով տրամադրվող ֆինանսական միջոցների սահմաններում բուհը պլանավորում է անհրաժեշտ ռեսուրսները և գնումը կազմակերպում ըստ անհրաժեշտության՝ նախապես համաձայնեցնելով դոնորի հետ:

Հատկանշական է նաև, որ համալսարանի, վարժարանի և հյուրատան ֆինանսական պլանավորումն ու կառավարումն արդեն երկու տարի է ինչ առանձնացված է իրականացվում՝ կարևորելով արտաքին փորձագիտական խմբի խորհրդատվությունը:

| ՆՊԱՏԱԿ 4. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ | | |
|---|---|---|
| **Գնահատման առանցքային ցուցանիշներ (KPI)** | **Թիրախային ցուցանիշ** | **Իրական ցուցանիշ** |
| 4.1. Ուսանողական համակազմի ընդհանուր թվաքանակի աճ | տարեկան նվազագույնը 10% | -2% (2020-2021՝ 517 ուսանող, 2021-2022՝ 507 ուսանող) |
| 4.2. Բարձր առաջադիմությամբ ուսանողների ներգրավում | տարեկան նվազագույնը 10% | 61% (թվով 147 ուսանող) |

**Հաշվետվություն (կետեր 4.1 և 4.2).**

2019-2025 թվականների զարգացման ռազմավարական ծրագրում ուսանողական համակազմի ավելացումը դիտարկվում է որպես ռազմավարական առաջնահերթություն և նպատակ, ինչը բուհը տեսնում է ուսանողների հավաքագրման փոխլրացնող մեթոդների կիրառման միջոցով: Ուսանողների հավաքագրման ռազմավարությամբ ներկայացվում են հստակ նպատակներ և թիրախային ցուցիչներ, որոնց համապատասխան գործողություններ են պլանավորվել և իրականացրել համալսարանի տարբեր ստորաբաժանումների կողմից, որոնք առնչվում են այս գործընթացի հետ. հասարակայնության հետ կապերի և գովազդի բաժին, ամբիոններ, նախապատրաստական բաժին և այլն:

Հավատարմագրումը ևս ունեցել է դրական ազդեցություն հատկապես առկա ուսուցման ձևով ուսանողների ներգրավման համատեքստում, մասնավորապես ԵՄՀ ընդունելության համար սահմանվել են անվճար տեղեր: Ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող բուհերի Տեղեկատվական համա-

կարգերի մասնագիտությամբ մագիստրոսական ծրագրերի ուսանողներին հնարավորություն է տրվել սովորել անվճար՝ օգտվելով աշխատավարձից վճարվող եկամտային հարկից (որոշումից օգտվել են ԵՄՀ տվյալ մասնագիտությամբ սովորող ուսանողները)։

Կառավարության 26 ապրիլի 2012 թվականի N 597–Ն որոշմամբ 2012 թ-ից մեկնարկել է բուհական ընդունելության գործընթացը՝ միասնական ընդունելության քննության եղանակով: Որոշմանը կից գործող կարգի համաձայն ՀՀ ԿԳ նախարարության վերահսկողության ներքո գործող բոլոր բուհերը, այդ թվում ԵՄՀ-ն իրենց մասնագիտությունների գծով առկա ուսուցման ընդունելությունն իրականացնում են միասնական և կենտրոնացված քննությունների միջոցով, որոնք կազմակերպվում և անցկացվում են «Գնահատման և թեստավորման կենտրոն» (ԳԹԿ) ՊՈԱԿի կողմից: Առկա ուսուցման հայտեր ներկայացրած ուսանողների ընդունելությունն իրականացվում է ԿԳՄՍ նախարարության համապատասխան կարգով:

ԵՄՀ ընդունվողների թվաքանակը, արտաքին մարտահրավերների և խնդիրների պատճառով (դեմոգրաֆիական, մրցակցային անհավասար պայմաններ և այլն) 2011-2018 թ-ի ընթացքում նվազման միտում է ունեցել: 2018թ.-ից, սակայն, կրթական բոլոր աստիճաններում կայուն աճ է գրանցվել: Դրական տեղաշարժ է գրանցվել նաև միջազգային ուսանողների ներգրավման ուղղությամբ. այդ առումով նույնպես համալսարանն իրականացվում է ավելի համակարգված, ուղղորդված աշխատանքներ: Վերլուծությունը վկայում է, որ ԵՄՀ-ն 2021-2022 ուստարում պահպանել է ընդունելության կայունությունը՝ ընդհանուր առմամբ ունենալով 239 դիմորդ, ցուցանիշը 107%-ով աճել է 2019-2020 ուսումնական տարվա համեմատ (2020-2021-ին ընդունվածների ընդհանուր թիվ՝ 259, 2019-2020-ին ընդունվածների թիվ՝ 115): Հատկանշական է, որ կայունորեն աճում է նաև ԳԹԿ-ով միասնական քննությունների մասնակցելով ընդունվողների թիվը, 2021-2022 ուսումնական տարվա կտրվածքով այդ կերպ ընդունվել է 25 ուսանող (2020-2021-ին՝ 23 ուսանող, 2019-2020-ին՝ 5 ուսանող)։

Քանակական տեսանկյունից զատ կարևոր է նաև, որ ընդունվածների 61%-ն (239-ից՝ 147-ը) ունի բարձր առաջադիմություն, մասնավորապես՝ 15%-ն (թվով 37 հոգի) ունի «գերազանց» առաջադիմություն, 46%-ն (թվով 110 հոգի) ունի «լավ» առաջադիմություն: Կայուն աճի միտում է նկատվում նաև միջազգային ուսանողների համակազմի ավելացման շուրջ, մասնավորապես 2020-2021 ուսումնական տարում նախորդ տարվա համեմատ ավելացել է 14%-ով, սակայն 2018-2019 ուսումնական տարվա համեմատ՝ 39%-ով (2018-2019-ին ընդունվել է 77 օտարերկրյա ուսանող)։

ԵՄՀ հիմնական մարտահրավերներից է համալսարանի դիրքավորումը՝ որպես որակյալ կրթություն տրամադրող բարձրագույն կրթական հաստատություն, մասնավորապես ավանդաբար դեպի պետական բուհեր կողմնորոշված ծնողների և դիմորդների շրջանում: Համալսարանի ճանաչելիության և կրթական շուկայում մատուցվող ծառայությունների տարբերակված մոտեցումների տարածման նպատակով համալսարանն իրականացնում է ինչպես ակտիվ գովազդային միջոցառումներ, այնպես էլ հասարակայնության հետ պահպանում է կայուն կապ:

| ՆՊԱՏԱԿ 5. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ | | |
|---|---|---|
| **Գնահատման առանցքային ցուցանիշներ (KPI)** | **Թիրախային ցուցանիշ** | **Իրական ցուցանիշ** |
| 5.1. Կրթական ծառայություններից բավարարվածության ցուցանիշ | նվազագույնը 75% | 64% (միջինացված) |

| | | |
|---|---|---|
| 5.2. Ռեսուրսների և լսարանային պայմանների որակով ուսանողների բավարարվածության ցուցանիշ | նվազագույնը 75% | 69% (միջինացված) |
| 5.3. Ուսանողների և շրջանավարտների կողմից նոր դիմորդների ներգրավման ցուցանիշ | նվազագույնը 20% | 15% (35 ուսանող) |
| 5.4. Աշխատանքային պայմաններից բավարարվածության ցուցանիշ | նվազագույնը 75% | 77% (միջինացված) |
| 5.5. Աշխատակիցների կողմից նոր դիմորդների ներգրավման ցուցանիշ | նվազագույնը 10% | 8% (20 ուսանող) |
| 5.6. Ավարտելուց հետո մեկ տարվա ընթացքում աշխատանքի տեղավորման ցուցանիշ | նվազագույնը 55% | 77% (որից մասնագիտ.՝ 49%) |

**Հաշվետվություն (կետեր 5.1, 5.2, 5.4).**

Յուրաքանչյուր տարի ԵՄՀ Որակի ապահովման կենտրոնի կողմից ուսանողների (ներառյալ նորավարտ շրջանավարտները) և աշխատակազմի (պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչները) շրջանում ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծության նպատակով իրականացվում է տարեկան ամփոփիչ հարցում: Հարցման միջոցով ուսումնասիրվում է կառավարման և վարչարարության, կրթական ծրագրերի, հետազոտական և գիտական աշխատանքներում ներգրավվածության, տեղեկատվական և հեռահաղորդակցության, գրադարանային, սննդի և այլ ծառայությունների, ինչպես նաև հիմնական գործընթացների արդյունավետությունը:

Ըստ հարցման արդյունքների՝ ուսանողների 64%-ը հստակ պատկերացնում է իր մասնագիտությունը և 63%-ը ծանոթ է մասնագիտության ուսումնական պլանին: Ուսանողների 53%-ը տեղեկացված է ԵՄՀ ակադեմիական խորհրդատվական ծառայությունների մասին, ընդ որում՝ լրացուցիչ պարապմունքների, ակնարկային դասախոսությունների և այլն: Բոլոր այն ուսանողներին, ովքեր երբևէ օգտվել են ակադեմիական խորհրդատվական ծառայություններից առաջարկվել է գնահատել որակն ընդհանուր առմամբ. գերազանց (35%), լավ (42%), բավարար (15%), վատ (8%): Ուսանողներին առաջարկվել է նաև գնահատել իրենց ամբիոնի կողմից առաջարկվող ծառայությունների որակն ընդհանուր առմամբ. արդյունքում՝ Կառավարման և ՏՀ ամբիոնի ուսանողների 64%-ը բավարարված է ամբիոնի գործունեությամբ, Իրավագիտության ամբիոնի ուսանողների 70%-ը, Ֆարմացիայի ամբիոնի ուսանողների 55%-ը, Օտար լեզուների և գրականության ամբիոնի ուսանողների 67%-ը:

Ուսանողներին և աշխատակազմին առաջարկվել է գնահատել թե որքանով են բավարարված ԵՄՀ ռեսուրսներից ու ենթակառուցվածքներից. լսարանային կահավորումից/ աշխատանքային պայմաններից բավարարված է ուսանողների 79% և աշխատակազմի 86%, լսարաններում տեխնիկայի հագեցվածությունից՝ ուսանողների 78%-ը և աշխատակիցների 80%-ը, գրադարանային ծառայությունների որակից՝ ուսանողների 68%-ը և աշխատակիցների 78%-ը, ջեռուցումից՝ ուսանողների 80%-ը և աշխատակիցների 85%-ը, բուժկետի ծառայություններից՝ ուսանողների 55%-ը և աշխատակիցների 72%-ը, անվտանգության ապահովման համակարգից՝ ուսանողների 67%-ը և աշխատակիցների 69%-ը, սանիտարահիգիենիկ վիճակից՝ ուսանողների 78%-ը և աշխատակիցների 76%-ը, ինտերնետ

հասանելիությունից՝ ուսանողների 55%-ը և աշխատակիցների 67%-ը, տեղեկատվական և հեռահաղորդակցության /ՏՀՏ/ տրամադրվող ծառայությունների որակից՝ ուսանողների 62%-ը և աշխատակիցների 80%-ը:

Ուսանողների 78%-ը և աշխատակիցների 89%-ը նշել է, որ հեշտ է կողմնորոշվում ԵՄՀ կայքէջում: Կայքում ներկայացված նյութերի որակը ևս բարձր է գնահատվել (ուսանողներ՝ 70%, աշխատակազմ՝ 78%): MS Teams հարթակի կառուցվածքով բավարարված են ուսանողների 79%-ը և աշխատակազմի 96%-ը, իսկ առկա նյութերի որակով՝ ուսանողների 77%-ը և աշխատակազմի 94%-ը:

**Հաշվետվություն (կետեր 5.3, 5.5).**

ԵՄՀ կարևորում է նաև աշխատակիցների և ուսանղների կողմից նոր դիմորդների ներգրավումը: Տվյալ ցուցանիշները բավականին խոսուն են և ներկայացնում են ներքին շահակիցների բավարարվածությունը ԵՄՀ ծառայություններից, ինչն արտահայտվում է բուհում սովորողների և աշխատողների երաշխավորությամբ, նոր ուսանողների ներգրավմամբ: Ընդհանուր առմամբ, 2020-2021 ուսումնական տարվա կտրվածքով, թվով 35 ուսանող (ընդհանուր ընդունվածների 15%) ներգրավվել է ուսանողների և շրջանավարտների և 20 ուսանող (8%) աշխատակիցների կողմից:

**Հաշվետվություն (կետ 5.6).**

Կարիերային նպաստող կարևոր ցուցանիշներից է զբաղվածության դինամիկան: Ըստ 2020 թվականին իրականացված վերլուծության՝ վերջին 5 տարիների կտրվածքով ԵՄՀ շրջանավարտների զբաղվածության հանրագումարային ցուցանիշը կազմում է 64%, իսկ մասնագիտական զբաղվածության ցուցանիշը նույն ժամանակահատվածի համար՝ 30%: Մագիստրոսական կրթական ծրագրերի շրջանավարտների զբաղվածության կտրուկ տարբերակվածություն է նկատվում, ԵՄՀ մագիստրոսների զբաղվածության ցուցանիշը կազմում է 77% (մասնագիտական զբաղվածությունը՝ 45%): Կարևորվում է նաև այն փաստը, որ զբաղվածների մեջ մեծ մաս են կազմում մասնագիտությամբ աշխատողները և բարձր հմտություններով (high skilled) ոչ մասնագիտական աշխատանք իրականացնողները. ընդհանուր զվաղվածները 237-ն են (ընդհանուրի 64%-ը), որից 112-ը (47%) մասնագիտությամբ աշխատող, 83-ը (35%) բարձր հմտություններով (high skilled) ոչ մասնագիտական աշխատանք իրականացնող և 42-ը (18%) նվազ հմտություններով (low skilled) շրջանավարտներ: Ավարտելուց հետո մեկ տարվա ընթացքում աշխատանքի տեղավորման ցուցանիշը 2020-2021 ուսումնական տարվա համար կազմում է 77%, որից 49%՝ մասնագիտական զբաղվածություն: Հատկապես բարձր է փոխանակման ծրագրերի մասնակցած ուսանողների մասնագիտական աշխատանքի տեղավորման ցուցանիշը և կազմում է 83% որից 69%՝ մասնագիտական:

ԵՄՀ Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնն, ինչպես նաև ամբիոններն ուսանողներին աշխատանքի ուղղորդելու առումով զգալի գործունեություն են իրականացնում: Վերջիններս նախաձեռնել են գործատուների հետ առանձին համագործակցության տարբեր ֆորմատի աշխատանքներ, որոնց արդյունքում կնքվել են հուշագրեր, պայմանագրեր: Այդ կազմակերպություններում ամբիոնի ուսանողների տեղակայումը պրակտիկայի համար դարձել է առավել նպատակային, քանի որ հաշվի են առնվում ուսանողների նախապատվությունները, ուժեղ կողմերը: Որպես արդյունք տարեցտարի ավելի շատ ԵՄՀ ուսանողներ անցնում են նաև մշտական աշխատանքի այդ համագործակից կազմակերպություններում, հաճախ նաև պրակտիկայի ավարտին:

| ՆՊԱՏԱԿ 6. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ | | |
|---|---|---|
| **Գնահատման առանցքային ցուցանիշներ (KPI)** | **Թիրախային ցուցանիշ** | **Իրական ցուցանիշ** |
| 6.1. Կնքվող պայմանագրերի թիվ | Նվազագույնը 3 (4 ամբիոնը միասին՝ 12) | **Ընդհանուր՝ 14 նոր պայանագիր**<br>Իրավագիտություն՝ 3 նոր պայմանագիր<br>Կառավարման և ՏՀ ամբիոն՝ 1 նոր պայմանագիր<br>Օտար լեզուների ամբիոն՝ 2 նոր պայմանագիր<br>Ֆարմացիայի ամբիոն՝ 7 նոր պայմանագիր |
| 6.2. Գործող պայմանագրերի թիվ | - | Ընդհանուր առմամբ, 48 գործող պայմանագիր |
| 6.3. Դասավանդող գործատուների թիվ | յուր. ամբիոնում դասավանդողների առնվազն 30% | **Ընդհանուր 48% (33 դասախոս)**<br>Իրավագիտության ամբիոն՝ 59% (9 դասախոս)<br>Կառավարման և ՏՏ ամբիոն՝ 59% (13 դասախոս)<br>Օտար լեզուների ամբիոն՝ 23% (4 դասախոս)<br>Ֆարմացիայի ամբիոն՝ 64% (7 դասախոս) |
| 6.4. Գործատուների հետ համատեղ ղեկավարմամբ թեզերի թիվ | նվազագույնը 20% | Պիլոտային կերպով է իրականացվել |
| 6.5. Գործատուների կողմից առաջարկված թեմաներով հետազոտությունների /թեզերի, ատենախոսությունների/ թիվ | նվազագույնը 20% | Պիլոտային կերպով է իրականացվել |
| 6.6. Փոխանակման ծրագրերի թիվ | 6 նոր փոխանակման ծրագիր մինչև 2025 | 4 նոր փոխանակման ծրագիր (ընդհանուր՝ 17) |
| 6.7. Կարողությունների զարգացման համատեղ ծրագրերի թիվ | 2 նոր կարողությունների զարգացման ծրագիր մինչև 2025 | 1 գործող կարողությունների զարգացման ծրագիր (ARMDOCT) |
| 6.8. Վարպետության դասերի և կազմակերպություններ արտագնա այցերի թիվ | յուր. ամբիոնում նվազագույնը 20 | **Ընդհանուր՝ 15**<br>Իրավագիտության ամբիոն՝ 9<br>Կառավարման և ՏՏ ամբիոն՝ -<br>Օտար լեզուների ամբիոն՝ 4<br>Ֆարմացիայի ամբիոն՝ 2 |

**Հաշվետվություն (կետեր 6.1-6.5, 6.8).**

Գործող ռազմավարական ծրագրով նախատեսվում է, որ յուրաքանչյուր ամբիոն պետք է տարեկան կտրվածքով ավելացնի գործընկեր կազմակերպությունների թիվը առնվազն 3-ով: Կնքվող հուշագրերը նպաստում են գիտական, ուսումնական և գործնական աշխատանքներում փորձի փոխանակմանը, գիտակրթական միջոցառումների, մասնագիտական քննարկումների և գիտաժողովների կազմակերպմանը, համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը, պրակտիկանների կազմակերպմանը և այլն: Հաշվետու ժամանակաշրջանում ԵՄՀ ամբիոնները համագործակցության նոր պայմանագրեր են կնքել տարբեր կազմակերպությունների, քոլեջների և այլ ուսումնական

հաստատությունների հետ: Ընդհանուր առմամբ, բուհում գործող պայմանագրերի թիվը 48-ն է, վերջինս համապատասխանում է ուսանողների թվին և լիովին բավարարում է սահմանված կերպով պրակտիկաները կազմակերպելուն:

Նպատակ հետապնդելով համալրել Պրոֆեսորադասախոսական կազմը մրցունակ և բարձր որակավորում ունեցող մասնագետներով, ԵՄՀ-ն հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է ուղղորդված աշխատանքները: Սկսած 2019-2020 ուսումնական տարվանից Գիտական խորհրդի որոշման համաձայն տարբերակված աշխատավարձ է սահմանվել հիմնական հաստիքային դասախոսների, գիտական աստիճան ունեցողների, գործատուների, անգլերենով դասավանդողների և ասպիրանտների համար: Հաշվետու ժամանակաշրջանում ԵՄՀ-ում բարձրացել է հիմնական և գիտական աստիճան ունեցող դասախոսների թիվը՝ ինչը պայմանավորված է բարձր որակավորում ունեցող մասնագետներով համալրելու ամբիոնների և ՄՌԿ բաժնի ուղղորդված աշխատանքներով, ինչպես նաև ՈԱԱԿ փորձագիտական խմբի խորհրդատվության հիման բարելավումների իրականացմամբ: Բուհը 2020-2021 ուսումնական տարվա դրությամբ ունի 68 դասախոս (այդ թվում՝ 4 գիտությունների դոկտոր/ պրոֆեսոր, 31 գիտությունների թեկնածու/ դոցենտ), հավատարմագրման ժամանակ բուհի ընդհանուր դասախոսների թիվը 43-ն էր, ինչը նշանակում է, որ հաջորդող 2 տարվա ընթացքում դասախոսների թիվն ավելացել է 58%-ով, ընդ որում՝ բոլոր մասնագիտությունների գծով: Դասախոսական կազմի 70%-ը (48 հոգի) հիմնական հաստիքային աշխատողներներ են (հավատարմագրման ժամանակաշրջանի ընթացքում հիմնական հաստիքային դասախոսները կազմել են ընդհանուրի 54%-ը): ԵՄՀ-ն էական նշանակություն է տալիս ուսանողների կողմից գործնական հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը, ինչի նպատակով համալրվել է դասախոսական կազմը պրակտիկ մասնագետներով և գործատուներով (ընդհանուր կազմի 48%-ը (33 հոգի) պրակտիկ աշխատողներ կամ գործատուներ են):

Կազմակերպություններ այցերը և վարպետության դասերի կազմակերպումը դեռևս պլանավորվածից ցածր մակարդակի վրա են: Ուսումնական տարում պիլոտային կերպով են իրականացվել գործատուների հետ համատեղ ղեկավարվող ավարտական աշխատանքներն ու թեզերը, ինչպես նաև գործատուների պատվերով հետազոտությունները: Սակայն այս ուղղությունները ամբիոնների ուշադրության կենտրոնում են և ռազմավարական ծրագրի իրականացման հաջորդ տարում նախատեսվում են բարելավվել: Գործատուների պատվերով հետազոտությունների իրականացումը խթանելու նպատակով վերանայվել է նաև «ԵՄՀ արտոնությունների սահմանման և կրթաթոշակների տրամադրման կարգ»-ը՝ հետազոտական կրթաթոշակներ սահմանելով մագիստրատուրայի ուսանողների համար:

**Հաշվետվություն (կետեր 6.6, 6.7).**

Գործող մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով նմանատիպ այլ մասնագիտությունների կրթական ծրագրերին համահունչ դարձնելու նպատակով ԵՄՀ-ն ակտիվորեն համագործակցում է մի շարք օտարերկրյա բուհերի հետ: Ներկայումս, թեև COVID19-ով պայմանավորված փոխանակումները նախատեսվածից ավելի քիչ են, առկա ծրագրերի շրջանակներում ԵՄՀ ուսանողները հնարավորություն ունեն իրենց ուսումնառության որոշակի հատվածը իրականացնել համագործակից բուհերից որևէ մեկում, իսկ դասախոսները կարող են մասնակցել

տարբեր վերապատրաստումների, ինչպես նաև դասախոսություններ կարդալ համագործակից բուհերի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համար: Թեև, 2019-2020 ուսումնական տարվանից սկսած փոխանակումների ցուցանիշները կտրուկ նվազել են ոչ միայն ԵՄՀ-ում, այլև ամբողջ երկրում և աշխարհում՝ կորոնավիրուսային (Covid19) հիվանդության տարածմամբ պայմանավորված, ԵՄՀ-ում կայուն աճել է նոր միջազգային պայմանագրերի թիվը: Մասնավորապես, 2020-2021 ուստարում կնքվել և վերակնքվել է 4 նոր փոխանակման ծրագրի պայմանագիր (ընդհանուր փոխանակումների պայմանագրերի թիվը՝ 17):

2019 թվականին ԵՄ համաֆինանսավորմանն է արժանացել ARMDOCT նախագիծը: ԵՄՀ համակարգմամբ ծրագրի անդամ 15 բուհերի ներկայացուցիչներ, այդ թվում՝ 4 ԵՄ և 8 ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություն, 2 գիտահետազոտական ինստիտուտ Հայաստանի Հանրապետությունից, ինչպես նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը համախմբվել են՝ բարեփոխելու Հայաստանում բարձրագույն կրթության երրորդ աստիճանը և վերամշակելու ազգային քաղաքականությունը, իրավական կարգավորող փաստաթղթերը, ինստիտուցիոնալ ընթացակարգերը: 2021 թվականին ծրագրի շրջանակներում մշակվել և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի (N 44-Լ, 16.11.2021թ.) հիման վրա հաստատվել է «ՀՀ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի (ասպիրանտուրա) բարեփոխումների հայեցակարգ»-ը:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՄՀ-ն ներգրավված է եղել նաև կարողությունների զարգացման այլ ծրագրերի հայտադիմումների մշակման և ներկայացման աշխատանքներում, որոնց արդյունքները հայտնի կլինեն աշնանը:

| ՆՊԱՏԱԿ 7. ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ | | |
|---|---|---|
| **Գնահատման առանցքային ցուցանիշներ (KPI)** | **Թիրախային ցուցանիշ** | **Իրական ցուցանիշ** |
| 7.1. Կառավարչական և կրթական գործընթացներից շահառուների բավարարվածության ցուցանիշ | նվազագույնը 75% | Աշխատակազմ՝ 94% (միջինացված), ուսանողներ՝ 85% (միջինացված) |
| **ՆՊԱՏԱԿ 8. ԹԻՐԱԽԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄ** | | |
| **Գնահատման առանցքային ցուցանիշներ (KPI)** | **Թիրախային ցուցանիշ** | **Իրական ցուցանիշ** |
| 8.1. Ներքին տեղեկատվական համակարգերի գործիքակազմի ընդլայնված կիրառություն՝ թղթատարության նվազեցմամբ | - | +4 գործիքի (MS teams, ebuh, MS Stream, Outlook Onedrive) կիրառություն |

**Հաշվետվություն (Կետեր 7.1, 8.1)**

Հիմքում ունենալով ուսումնական գործընթացի կառավարումն ու կազմակերպումը պարզեցնելը, օպերատիվության, ճկունության և արդյունավետության մակարդակը բարձրացնելը՝ ԵՄՀ-ն այժմ Ebuh բուհերի ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման փուլում է, ինչը նպաստում է ՌԾ-ով սահմանվող թիրախային գործընթացների ավտոմատացման նպատակի իրագործմանը: Համակարգի ներդրումը հնարավորություն կտա ավտոմատացնել ԵՄՀ գործունեության հնարավոր հիմնական ուղղությունները՝ ապահովելով տեղեկատվական միասնական բազա: Համակարգի արդյունավետ ներդրումն ապահովելու նպատակով ռեկտորի հրամանով

ստեղծվել է պատասխանատու աշխատանքային խումբ, միաժամանակ կասեցվել է StudentM համակարգի կիրառությունը, քանի որ Ebuh համակարգը ներառում է բոլոր անհրաժեշտ գործիքակազմը ուսումնական գործընթացն արդյունավետ կերպով կառավարելու համար:

Համալսարանն անցում է կատարել խառը ուսուցման՝ որպես հարթակ ընտրելով Microsoft Teams-ը, որի հետ զուգահեռաբար կիրառվել են նաև MS Stream (որում կուտակվում են բոլոր դասընթացների ձայնագրությունները և ամբիոնների վարիչներին հնարավորություն տալիս անարգել հետևել դրանց իրականացմանը) և Outlook Onedrive հարթակները: Հաշվի առնելով հարթակի համալիր գործիքակազմը և կիրառությունը, որոշում է կայացվել դադարեցնել MOODLE համակարգի գործունեությունը և տեղափոխել բոլոր նյութերը MS Teams հարթակ:

Ընդհանուր առմամբ բուհի կրթական և կառավարչական գործընթացներից բավարարված է աշխատակիցների ավելի քան 90%-ը և ուսանողների ավելի քան 80%-ը: Մանրամասն ներկայացված է մեջ:

| ՆՊԱՏԱԿ 9. ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄ | | |
|---|---|---|
| **Գնահատման առանցքային ցուցանիշներ (KPI)** | **Թիրախային ցուցանիշ** | **Իրական ցուցանիշ** |
| 9.1. Համատեղ/ կրկնակի դիպլոմների շնորհմամբ կրթական միջազգային ծրագրերի գործարկում | նվազագույնը 1 նոր ծրագիր մինչև 2021-2022 | 3 նոր կրկնակի դիպլոմի ծրագիր՝ երեք կրթական աստիճաններում (Լեհաստանի, Իտալիայի և Իսպանիայի առաջատար բուհերի հետ) |
| 9.2. Համատեղ/ կրկնակի դիպլոմների շնորհմամբ կրթական միջազգային ծրագրերում ներգրավված ուսանողների թիվ | նվազագույնը 10 ուսանող մինչև 2021-2022 | 2020-2021 ուսումնական տարվա կտրվածքով՝ 9 հոգի |
| 9.3. Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր մասնագիտացումների թիվ | առնվազն 1 յուրաքանչյուր ամբիոնում մինչև 2025 | Ֆինանսներ (բակալավրի ԿԾ)<br>Լրագրություն (բակալավրի ԿԾ)<br>Տարրական մանկավարժություն (բակալավրի ԿԾ) |
| 9.4. Ներքին կրկնակի դիպլոմի կրթական ծրագրերի զարգացում | առնվազն 2 ծրագիր մինչև 2025 | 1 (կառավարում և իրավագիտություն) |
| 9.5. Կրթական ծրագրերում անգլերենով դասավանդվող դասընթացների թվի ընդլայնում | առաջարկվող դասընթացների նվազագույնը 5% | 5% աճ նախորդ տարվա համեմատ |

**Հաշվետվություն (9.1-9.5)**

ԵՄՀ գործող կրթական ծրագրերում սահմանված ուսումնառության վերջնարդյունքների մշակման համար հիմնականում որպես ուղենիշ են հանդիսանում հետևյալ փաստաթղթերը՝

- ՀՀ Որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ),
- գործող կրթական չափորոշիչները,
- ՀՀ զբաղմունքների դասակարգիչը, գործատուների պահանջները (աշխատանքի տեղավորման հայտարարությունների և բուհի հետ առկա համագործակցությունների հիման վրա),
- այլ կրթական հաստատությունների լավագույն փորձը,
- որակավորումների ոլորտային շրջանակները (առկայության դեպքում):

ԵՄՀ վերջնարդյունքահեն կրթական ծրագրերի հիմքում դրված է եվրոպական տարածաշրջանում մշակված և Բոլոնյան գործընթացի յուրօրինակ ճանապարհային քարտեզ համարվող՝ ուսանողակենտրոն, այդ թվում՝ վերջնարդյունքահեն «TUNING» մեթոդաբանությունը: Համալսարանը հատկապես կարևորում է Լոմոնոսովի անվան պետական համալսարանի կողմից մշակված «Թյունինգ Ռուսաստան» (Tuning Russia) համալիր ծրագրի կրթական վերջնարդյունքները, որոնք տեղայնացվել են՝ հիմքում ունենալով ՀՀ ՈԱԾ-ը: Ռուսական թյունինգի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ այն արդեն իսկ տեղայնացված է հետխորհրդային երկրների համար, ինչպես նաև ներառում է ԵՄՀ մասնագիտություններին համապատասխան շրջանակները և զարգացված է բոլոր շահակիցների կարծիքների հիման վրա: Կիրառվել են նաև ուսանողների ընդհանրական կոմպետենցիաները բնութագրող «Դուբլինյան նկարագրիչները»:

ԵՄՀ բոլոր կրթական ծրագրերի համադրելիությունը վերոնշյալ փաստաթղթերի հետ արտահայտված է ամբիոնների կողմից իրականացված մասնագիտության կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություններում: Բացի այդ, կրթական ծրագրերին կից հավելվածում ներկայացված են համապատասխան մասնագիտությունների կրթական վերջնարդյունքների համադրելիությունը ՀՀ ՈԱԾ-ին և ՈՈԾ-ին: Նշված է յուրաքանչյուր վերջնարդյունքի կապը կոնկրետ գիտելիքի, հմտության և կարողունակության հետ:

Կարևորելով յուրաքանչյուր ուսանողի անհատական ուսումնական հետագծի ձևավորումը և շարժունության հնարավորությունների ապահովումը, որը նաև ՈԱԱԿ փորձագիտական խմբի խորհրդատվությունն էր՝ ԵՄՀ-ն շարունակաբար զարգացնում և ապահովում է առավել ճկուն ուսումնական ծրագրեր՝ արձագանքելով նաև Բոլոնիայի համաձայնագրի պահանջներին:

Միջազգային կրկնակի դիպլոմի ծրագրերի իրականացումը. Հետազոտական ծրագրերի դրական արդյունքներից է Իսպանիայի Սանտիագո դե Կոմպոստելա համալսարանի հետ համագործակցության ընդլայնումը. համալսարանի հետ կնքվել է համատեղ ղեկավարման և դոկտորական ծրագրի իրականացման պայմանագիր, որի համաձայն ԵՄՀ 2 հետազոտող հնարավորություն ունեն համաղեկավարման միջոցով հետազոտություն իրականացնել և՛ Հայաստանում, և՛ Իսպանիայում: Իրավագիտության ամբիոնը Իտալիայի Տուշիայի համալսարանի հետ իրականացնում է «Անվտանգության և մարդու իրավունքների» կրկնակի դիպլոմի մագիստրոսական կրթական ծրագիրը, իսկ Կառավարման և ՏՀ ամբիոնը Վարշավայի տնտեսագիտության և հումանիտար գիտությունների համալսարանի հետ կրկնակի դիպլոմի ծրագրեր է մեկնարկել բակալավրի և մագիստրատուրայի մակարդակներում:

Նոերդրված ներքին կրկնակի դիպլոմի ծրագրի շրջանակներում ուսանողն ունի հնարավորություն ուսումնառելու զուգահեռաբար երկու ծրագրում՝ ստանալով երկու որակավորում (առկա և հեռակա համակարգով): Կան դասընթացներ և կրդիտներ, որոնք ընդհանուր են բոլոր մասնագիտությունների համար և այս դեպքում ուսանողը կարող է համընկնող կրեդիտներն (shared credits) օգտագործել երկրորդ մասնագիտության պահանջները բավարարելու համար: Հաշվետու ժամանակաշրջանում ներքին կրկնակի դիպլոմի ծրագիրը բուհում դեռևս պիլոտային կերպով է իրականացվել՝ կառավարում և իրավագիտություն մասնագիտությունների շրջանակներում:

Հիմքում ունենալով իրականացված միջազգային բենչմարքինգի արդյունքները՝ Գիտական խորհրդի որոշմամբ, համալսարանի բոլոր մասնագիտությունների գծով, որակապես բարելավվել են մագիստ-

ռոսական կրթական ծրագրերը: Փորձագիտական եզրակացությունների հիման վրա վերագնահատվել է տեսական և գործնական գիտելիքի համամասնությունը՝ ընդլայնվել է մագիստրոսի անհատական և գիտական-հետազոտական աշխատանքի ծավալը: Հիմքում ունենալով իրականացված հետազոտությունները և բարելավումները, ինչպես նաև հաշվի առնելով մի շարք փաստեր, ինչպիսիք են. (i) մագիստրոսական կրթական ծրագրում առավելապես ընդգրկվում են մասնագիտական աշխատանք ունեցող դիմորդներ, ովքեր արդեն ունեն որոշակի գործնական հմտություններ և այս դեպքում որոշ դասընթացների իրականացումը նպատակահարմար չէ, (ii) վերամասնագիտացման և նոր մասնագիտություն ձեռք բերելու նպատակ ունեցող ու աշխատանքով ապահովված դիմորդները մագիստրոսական մասնագիտական կրթական ծրագրով նախատեսված որակավորման վերջնարդյունքները ավելի արագ յուրացնելու արդարացի պահանջ են առաջադրում (նաև ֆինանսական խնայողությունից ելնելով), (iii) հանրապետության մի շարք բուհեր՝ եվրոպական համալսարանների օրինակով, արդեն անցել են ավելի կարճ տևողությամբ մագիստրոսական կրթական ծրագրերով ուսուցման համակարգի, որի պատճառով միջբուհական մրցակցային անհավասար դաշտ է առաջացել, (iv) գործատուների պահանջը և առաջարկները՝ աշխատակցի առավել արագ վերամասնագիտացման և այլն: Իրականացված հետազոտությունները և նշված գործոնները նկատի ունենալով ուսուցման տևողության կրճատման անհրաժեշտություն է առաջացել, որի նպատակով բուհը հայցել է ԿԳՄՍ նախարարության թույլտվությունը մագիստրոսական կրթական ծրագրերի լիցենզիաներով նախատեսված երկու տարվա ուսուցման տևողությունը փոխարինելու մեկ և կես տարվա կրթական ծրագրերի իրականացման տևողությամբ: Արդյունքում՝ ԵՄՀ բոլոր մագիստրոսական կրթական ծրագրերի տևողությունը կրճատվել է՝ դառնալով 1.5 տարով:

Շարունակաբար ընդլայնվում է նաև կրթական ծրագրերում անգլերենով առաջարկվող դասընթացների թիվը (Հղում):

| ՆՊԱՏԱԿ 10. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ | | |
|---|---|---|
| **Գնահատման առանցքային ցուցանիշներ (KPI)** | **Թիրախային ցուցանիշ** | **Իրական ցուցանիշ** |
| 10.1. Աշխատակազմի բավարարվածություն վերապատրաստումների, որակավորման բարձրացման ծրագրերի որակով | նվազագույնը 75% | 90% (միջինացված) |
| 10.2. Աշխատակազմի անգլերեն լեզվի մակարդակ | նվազագույնը 50% տիրապետում են B1 մակարդակով մինչև 2022 | 2020-2021 ուսումնական տարվա կտրվածքով վարչական աշխատակազմի մոտ 60%-ը տիրապետում է անգլերենին |
| 10.3. Միջազգային վերապատրաստումների, գիտաուսումնական փոխանակման ծրագրերի մասնակցած աշխատողների և ասպիրանտների թվի աճի դինամիկա | նվազագույնը 10% նախորդ տարվա համեմատ | Իրականացվել է ընդամենը 1 փոխանակում՝ պայմանավորված COVID19 սահմանափակումներով |
| 10.4. Ուսանողների և աշխատակազմի թվային հմտությունների բարելավում | նվազագույնը 50% ունեն անկախ օգտագործողի մակարդակ (Independent user) մինչև 2023 | 2020-2021 ուսումնական տարվա կտրվածքով վարչական աշխատակազմի մոտ 50%-ը |

| | | |
|---|---|---|
| | | ունի անկախ օգտագործողի մակարդակ |
| 10.5. Օտար լեզուներով դասավանդող (եվրոպական չափանիշներով առնվազն B2/C1/C2 մակարդակներով) դասախոսների թիվ | նվազագույնը 30% | 46% (31 դասախոս) |
| 10.6. Հետազոտական կարողությունների բարելավմանն ուղղված վերապատրաստումների թիվ | | 1 |

**Հաշվետվություն (Կետեր 10.1, 10.3, 10.6)**

Բուհում ՈԱ կենտրոնի կողմից հստակ պարբերականությամբ իրականցվում են վերապատրաստումների կարիքի գնահատում, որի հիման վրա կազմվում է մեթոդական վերապատրաստումների ժամանակացույցը և թեմաների ցանկը: Մեթոդական վերապատրաստումներն իրականացվում են կենտրոնացված կերպով՝ ՄՌԿ բաժնի համակարգմամբ, իսկ մասնագիտական վերապատրաստումները՝ ամբիոնների և դասախոսների կողմից: Հաշվետու ժամանակաշրջանում մեթոդական վերապատրատումներն իրականացվել են առցանց՝ հաշվի առնելով COVID19-ով պայմանավորված սահմանափակումները: Վերապատրաստումներին մասնակցած դասախոսների 90%-ից ավելին բավարարված է եղել վերապատրաստման կազմակերպվածությունից, ներկայացվող նյութերի որակից, դասընթացավարների մասնագիտական պատրաստվածությունից:

Թեև 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում ավելացել է կնքվող միջազգային պայմանագրերի թիվը (դառնալով՝ 17), COVID19-ի սահմանափակումներով պայմանավորված ուսումնական տարվա բոլոր փոխանակումները տեղափոխվել կամ չողարկվել են, իրականացվել է միայն 1 հայցորդի միջազգային փոխանակում:

Հաշվետու ժամանակաշրջանում, հետազոտական կարողությունների զարգացմանը միտված երկու խոշոր արտագնա վերապատրաստում է իրականացվել նաև «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» (ARMDOCT) Էրազմուս+ կարողությունների զարգացման նախագծի շրջանակներում:

Դասախոսական կազմի որակավորումների բարձրացմանը, կայունության ապահովմանը, ինչպես նաև երիտասարդացմանն է նպատակուղղված ԵՄՀ մեկ այլ նախաձեռնություն. դեռևս 2015 թվականից հիմնադիրների խորհրդի որոշման համաձայն՝ գիտական աստիճան չունեցող դասախոսների համար ԵՄՀ-ն տալիս է անվճար կամ մասնակի վճարումով ուսումը ասպիրանտուրայում շարունակելու հնարավորություն: Արդյունքում՝ ԵՄՀ 5 աշխատակից, շարունակում է կրթությունը ասպիրանտուրայում: Խրախուսվում է նաև ասպիրանտների և երիտասարդ հետազոտողների ներգրավումը դասախոսական կազմում (ընդհանուր ՊԴ կազմի 10%-ը (թվով 7 հոգի) ասպիրանտ/ հայցորդ են):

**Հաշվետվություն (Կետեր 10.2, 10.4, 10.5)**

Ունենալով ռազմավարական նպատակ բարելավել աշխատակիցների անգլերեն լեզվի մակարդակը՝ սահմանվել է, որ մինչև 2022 թվականը աշխատակազմի նվազագույնը 50%-ը պետք է տիրապետի անգլերենին նվազագույնը B1 մակարդակին: Այս նպատակից ելնելով աշխատակիցների (այդ թվում՝

վարչական, ուսումնաօժանդակ և դասախոսական կազմ) համար կազմակերպվել են անգլերեն լեզվի անվճար դասընթացներ։ Դասընթացները կազմակերպվել են Դասընթացների կենտրոնի կողմից, նախնական թեստավորման արդյունքում ձևավորվել է երկու խումբ՝ ըստ անգլերենի իմացության մակարդակի, ում դասավանդել են ԵՄՀ և հրավիրյալ դասընթացավարները։ Միջազգայնացման համատեքստում կարևորվում է նաև անգլերեն լեզվով դասընթացների անցկացումը, համաձայն որի հայ և օտարերկրյա խմբերում անգլերեն լեզվով մասնագիտական և ոչ մասնագիտական դասընթաց-ներ են վարում 31 դասախոս (ընդհանուրի 46%-ը)։

**ՆՊԱՏԱԿ 11. ԲՈՒՀԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ, ԿԻՐԱՌԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ**

| Գնահատման առանցքային ցուցանիշներ (KPI) | Թիրախային ցուցանիշ | Իրական ցուցանիշ |
|---|---|---|
| 11.1. Գիտական աստիճան կամ կոչում ունեցող աշխատակիցների տոկոս | նվազագույնը 50% | 51% |
| 11.2. Նպատակային ներքին դրամաշնորհային ծրագրերի թիվ | նվազագույնը 3 | 6 |
| 11.3. Գիտաժողովների և համաժողովների թիվ | նվազագույնը 3 | 2 (պլանավորված որոշ միջազգային միջոցառումներ չեղարկվել են) |
| 11.4. Միջազգային ամսագրերում հրապարակումների աճի դինամիկա | նվազագույնը 10% | 10% աճ նախորդ տարվա համեմատ |
| 11.5. Հետազոտական ծրագրերի և հրապարակումների թիվ | | 40 հրապարակում ԵՄՀ դասախոսների կողմից |
| 11.6. Հետազոտությանն ուղղված ֆինանսական միջոցների տոկոս (բյուջեի) | Նվազագույնը 8% մինչև 2021 | Նախատեսված է |

**Հաշվետվություն (Կետ 11.1)**

Գիտական աստիճան/ կոչում ունեցող դասախոսների ներգրավման նպատակով ԵՄՀ-ում սահման-վել են տարբերակված աշխատավարձեր, համաձայն որոնց՝ (i) թեկնածուական գիտական աստիճան ունեցող համատեղող դասախոսը՝ գիտական աստիճան չունեցող համատեղող դասախոսի համե-մատ ստանում է 55%-ով ավել ժամավճար, նաև գիտական կոչում ունենալու դեպքում՝ 70%-ով ավել ժամավճար; (ii) թեկնածուական գիտական աստիճան ունեցող հիմնական դասախոսը՝ գիտական աստիճան չունեցող հիմնական դասախոսի համեմատ ստանում է 85%-ով ավել ժամավճար; (iii) թեկնածուական գիտական աստիճան ունեցող հիմնական դասախոսը, գիտական աստիճան չունե-ցող համատեղող դասախոսի համեմատ ստանում է 135%-ով ավել ժամավճար։ 2020-2021 ուսումնա-կան տարում գիտական աստիճան կամ կոչում ունեցող աշխատակիցները կազմել են ընդհանուրի 51%-ը։

**Հաշվետվություն (Կետ 11.2)**

Իրականացվել է ներքին դրամաշնորհային ծրագրի վերափոխում՝ բուհի սահմաններից դուրս հաս-տատությունների (այդ թվում գործատուների, վերլուծաբանների, փորձագետների և հետազոտական

ինստիտուների) ներգրավման հնարավորությամբ: Դիմորդներին որպես ակնկալիք է ներկայացվել Կայուն զարգացման 17 նպատակների սահմաններում Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների շրջանակում կոնկրետ խնդիրների բացահայտումն ու ձևակերպումը, հետազոտության իրականացում և կիրառական լուծումների ներկայացումը, ինչպես նաև փաստարկների վրա հիմնված խնդիրների ձևակերպումը, հստակ մեթոդաբանության կիրառումը և ապացույցների վրա հիմնված եզրակացությունների, առաջարկների ձևակերպումը: Աշխատանքները շարունակվել են դեռևս 2019-2020 ուսումնական տարում ֆինանսավորման համար ընտրված 6 հետազոտական ծրագրերի հետազոտողների հետ: Հետազոտական ծրագրերից 2-ը հաջողությամբ ավարտվել են, մյուսները դեռևս ընթացքի մեջ են կամ ընդհատվել են պայմանագրում նշված ժամկետները չպահպանելու պատճառով:

**Հաշվետվություն (Կետեր 11.3-11.6)**

Կարևորելով հետազոտության միջազգայնացումը, համալսարանի 2019-2025թթ. ռազմավարական ծրագիրը մշակող աշխատանքային խումբը ուսումնասիրել է նաև միջազգային հեղինակավոր վարկանիշավորման չափանիշները և ռազմավարական ծրագրում նախանշել համապատասխան գործողություններ: Մասնավորապես՝

- Համալսարանի ճանաչելիությունը և համալսարանական ու գործարար հանրութ¬յան մոտ համալսարանի հեղինակության բարձրացում. այս նպատակով նախատեսված է ամրապնդել գործատուների հետ ռազմավարական համագործակցությունը՝ կրթական և հետազոտական ծրագրերի համատեղ իրականացմամբ, ինչպես նաև ամրապնդել ազգային և օտարերկրյա բուհերի հետ առկա համագործակցությունը՝ փոխանակման, կարողությունների զարգացման և հետազոտական ծրագրերի իրականացմամբ, ինչպես նաև ընդլայնել համագործակից համալսարանների շրջանակը:
- Համալսարանական անձնակազմի գիտական հրապարակումների և համապատասխան մեջբերումների քանակի ավելացում. այն նպատակով ներբուհական կանոնակարգերով խթանվում է տարբեր հետազոտությունների իրականացումը (R&D), հետազոտական գործունեության միջազգայնացումը, ինչպես նաև խրախուսվում են բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում հրապարակումները: “ARMDOCT” ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների համատեքստում նախատեսվում է ներդնել բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կրթության կազմակերպման նոր մոդել՝ համագործակցային դոկտորական դպրոցի ձևավորմամբ: Հատուկ ուշադրություն է դարձվում ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ԲՈԿ-ի կողմից ընդունելի համարվող “Բանբեր ԵՄՀ” գիտական պարբերականի աշխատանքների որակի բարձրացմանը:
- Օտարերկրյա դասախոսների և ուսանողների մասնաբաժնի ավելացում. այս նպատակով նախատեսված է մշակել և ներդնել կրթական նոր ծրագրեր՝ միտված աշխատաշուկայի պահանջների բավարարմանը և ուսանողական համակազմի միջազգայնացմանը, ինչպես նաև միջազգայնացնել կրթական բովանդակությունը, ուսուցման և ուսումնառության մեթոդները, բարելավել վերջնարդյունքահեն ծրագրերը: Առանձնահատուկ ուշադրության են արժանանում կրկնակի դիպլոմի կրթական ծրագրերի իրականացումը Եվրոպական

գործընկեր համալսարանների հետ համատեղ (վերջին երկու տարիների ընթացքում երկու նոր կրկնակի դիպլոմի ծրագիր է մեկնարկել, ինչպես նաև մեկ համատեղ հետազոտական ծրագիր Իսպանիայի Սանտիագո դե Կոմպոստելա համալսարանի հետ)։

Հավատարմագրումից հետո ԵՄՀ «Բանբեր» պարբերականի խմբագրական խորհրդի ուղղորդված ջանքերի արդյունքում ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահի հրամանի համաձայն՝ Եվրասիա միջազգային համալսարանի «Բանբեր» պարբերականը ներառվել է ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն որակավորման կոմիտեի համար ընդունելի գիտական հրատարակութ-յունների ցուցակում: Միջազգային լավագույն փորձի հիման վրա վերանայվել և վերափոխվել են ԵՄՀ «Բանբեր» գիտական պարբերականի հոդվածներին ներկայացվող կառուցվածքային, բովանդակային և տեխնիկական պահանջները։

Հատկանշական է, որ ի տարբերություն մի շարք այլ պարբերականների՝ ԵՄՀ «Բանբեր» պարբերականում հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով և ներքին, և արտաքին շահակիցների համար՝ խրախուսելով միայն որակյալ հոդվածների տպագրությունը: Պարբերականի հոդվածների գրախոսումը ևս համապատասխանեցվել է կառուցվածքային նոր պահանջներին և իրականացվում է տեղացի և արտասահմանցի անկախ փորձագետների միջոցով, խստորեն պահպանվում են «Ակադեմիական ազնվության և գրագողության կանխարգելման կարգ»-ի դրույթները՝ տպագրության երաշխավորելով միայն բարձրորակ հոդվածները։ Յուրաքանչյուր տարի լույս է տեսնում պարբերականի 2 համար։

Հետազոտության և գիտության զարգացման իրականացված աշխատանքների և թիրախային գործողությունների արդյունքում ռազմավարական ցուցանիշների կտրուկ աճ է նկատվում այս մասով. ավելացել է գիտական աստիճան ունեցող դասախոսների թիվը, ապահովվել է նախանշված միջազգային գիտաժողովների և համաժողովների թիվը, հետազոտական ակտիվության, ԵՄՀ անունից հոդվածների տպագրության համար դրամանական պարգևատրումների են արժանացել մի շարք դասախոսներ և այլն։ 2020-2021 ուսումնական տարվա դրությամբ ԵՄՀ-ն համակարգում է 1 կարողությունների զարգացման ծրագիր (ARMDOCT)՝ միտված Հայաստանում դոկտորական կրթության բարեփոխմանը: